ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, **ք.Երևան, Վ.Սարգսյան** 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-**Ե**-

1 օգոստոսի 2023թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **ՍԵՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Խաչատրյան,

Սույն թվականի հուլիսի 27-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է թիվ ՎԴ/0647/05/23 գործն ըստ հայցի ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ ՀՀ Կառավարության, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Երևանի քաղաքապետի՝ 2005 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1878-Ա որոշմամբ Վաչագան Թովմասյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու և հողամաս օտարելու իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու, որպես հետևանք՝ Երևանի քաղաքապետի և Վաչագան Թովմասյանի միջև 2005 թվականի օգստոսի 17-ին կնքված թիվ 90/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Վաչագան Թովմասյանին 2005 թվականի օգոստոսի 25-ին տրված թիվ 854159 սեփականության իրավունքի գրանցման վկայականը և գրանցման միասնական 01-0064126 մատյանի 000299 համարի գրառումները, Ալվարդ Թովմասյանի անվամբ Երևանի նոտարական տարածքի նոտարի կողմից 2021 թվականի մարտի 30-ին տրված՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 26-րդ հոդվածի կարգով տվյալ գործի ենթակայությունը որոշելու համար այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Ձեր՝ 2023 թվականի հուլիսի 24-ի որոշումը:

Վերոնշյալ որոշմամբ, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասին և նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով, ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը, իսկ թիվ ՎԴ/0647/05/23 գործով հայցվոր է հանդիսանում ՀՀ գլխավոր դատախազությունը, որն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում պետական շահերի պաշտպանության հայց է ներկայացրել դատարան, հանգել եք հետևության, որ տվյալ գործը ենթակա չէ քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ ենթակայությունը որոշելու համար այն ուղարկելով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ *«2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

3. Հակակոռուպցիոն դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում դատարանից ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում հակակոռուպցիոն դատարանից ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը»:

Մեջբերված իրավակարգավորումներից ուղղակիորեն հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին է վերապահված ՀՀ դատարանների միջև գործերի ընդդատության կամ ենթակայության հետ կապված և համապատասխան որոշմամբ բարձրացված վեճի (վեճերի) լուծման իրավասությունը: Մինչդեռ Ձեր՝ 2023 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումն այն մասին, որ տվյալ գործը ենթակա է Հակակոռուպցիոն դատարանին, ինքնին բավարար չէ գործի ենթակայության վերաբերյալ Քաղաքացիական և Հակակոռուպցիոն դատարանների միջև վեճի առկայությունը փաստելու, և ըստ այդմ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից այն լուծելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը գործադրելու համար, նկատի ունենալով, որ առկա չէ նույն հարցի վերաբերյալ Հակակոռուպցիոն դատարանի հակառակ դիրքորոշումը:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումների համատեքստում զրկված չեք գործը Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու հնարավորությունից, վերադարձվում է թիվ ՎԴ/0647/05/23 գործը:

Առդիր՝ թիվ ՎԴ/0647/05/23 գործը (1 հատոր):

Հարգանքով՝ **ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**